

# Բարի կանխագուշակումներ հեղինակ՝ Թերրի Պրատչետտ եւ Նիլ Գեյման թարգմանիչ՝ Garbage Collector

Բովանդակություն

[Սկզբում](#)

[Տասնմեկ տարի առաջ](#)

## Սկզբում

---

Օրը լավն էր:

Ու բոլոր օրերն էլ լավն էին: Հիմա արդեն, դրանց թիվը ահագին անցել էր յոթից, իսկ անձրեւը դեռ չէր հայտնագործվել: Բայց Եդեմից դեպի արեւելք հավաքվող թխապերը հստակորեն ցույց էին տալիս, որ առաջին ամպրոպը մոտենում էր, եւ այն ուժեղ էր լինելու:

Արեւելյան դարպասների հրեշտակը թեւերով ծածկեց գլուխը, առաջին կաթիլներից պաշտպանվելու համար:

— Ներիր, — ասաց նա քաղաքավարի, — ի՞նչ էիր ասում:

— Ասում էի, այն մեկը ոնց որ կապարի փուչիկ լիներ, — պատասխանեց օձը:

— Օհ, այո, — գլխով արեց հրեշտակը, ում անունը Ազիռաֆայել էր:

— Իմ կարծիքով, դա արդեն չափազանց էր, — նկատեց Օձը, — դե այո, առաջին վիրավորանքը ու նման բաներ, բայց ի՞նչ վատ բան կա, բարու ու չարի տարբերությունն իմանալու մեջ:

— Դա պիտի որ վատ լինի, — պատասխանեց Ազիռաֆայելը, ձայնի այնպիսի երանգով, որից երեւում էր, նա ինքն էլ չի հասկանում, թե բանն ինչն է, ու դա նրան անհանգստացնում է, — հակառակ դեպքում, դու դրանում ներքաշված չէիր լինի:

— Նրանք պարզապես ասացին՝ վեր կաց, գնա այնտեղ, խառնաշփոթ ստեղծիր,  
— հոգոց հանեց օձը, ում անունը Քրոուլի էր, բայց նա մտածում էր փոխել այն:  
Քրոուլին չէր բնութագրում իրեն:

— Հա, բայց դու դեռ ես: Համոզված չեմ, թե դու կարող ես բարին  
արարել(ստեղծել), — հիշեցրեց Ազիռաֆայելը, — քո էությունն է, ոչ մի անձնական  
բան, հասկանում ես:

— Բայց ընդունիր, որ ծառի, վրա մեծատառերով գրել «Ձեռք Չ'տալ»ը աննկատ  
չէ, — ասաց Քրոուլին, — նկատի ունեմ, ինչն<sup>ո</sup> չդնել ինչոր բարձր լեռան գագաթին,  
կամ էլ հեռու մի տեղ: Ստիպում է խորհրդածել, թե ինչ էր Նա իրականում ծրագրել:

— Ամենալավը ենթադրություններ չանելն է, — պատասխանեց Ազիռաֆայելը,  
— ես միշտ ասում եմ, աշխարհի կարգերը ավելի լավ է չհասկանալ: Կա ճիշտը եւ կա  
սխալը: Երբ քեզ ասել են անել ճիշտը, իսկ դու Սիսալն ես արել, ապա դու պատժի ես  
արժանի:

Նստած էին, անհարմար լռություն էր, ու նրանք դիտում էին, թե ինչպես է  
անձրեւը թրջում առաջին ծաղիկները: Վերջիվերջո Քրոուլին խախտեց լռությունը:

— Իսկ դու մի՞ թե բոցավառ դաշույն չունեիր:

— Ըր, — երկարացրեց հրեշտակը, դեմքի մեղավոր արտահայտությունը  
սկզբում արագ անցավ նրա դիմագծերով, հետո վճռականորեն օթեւան գտավ այնտեղ:

— Այնպես չէ՞, ոնց որ կրակ լիներ:

— Ըր, դե հա:

— Այն, շատ տպավորիչ էր, իմ կարծիքով:

— Հա, բայց դե:

— Կորցրել ես, այնպե՞ս չէ:

— Օհ, ոչ, չեմ կորցրել, ավելի շուտ . . .

— Դե՞:

Ազիռաֆայելը թշվառ տեսք ուներ:

— Եթե այդքան շատ ես ուզում իմանալ, կասեմ, — դժկամորեն շարունակեց, —  
ես այն տվել եմ . . .

Քրոուլին աչքերը չռեց նրա վրա:

— Դե, այդպես էր պետք, — ասաց հրեշտակը ձեռքերը անհանգսիտ տրորելով, — Խեղճերը շատ էին մրսում, նա արդեն հոլի էր, իսկ այնտեղ վախենալու գազաններ կան, հետն էլ այս ամպրոմը . . . դե, ես էլ մտածեցի ու ասացի. «Եթե հանկարծ ցանկանաք վերադառնալ, ձեզ հետ չեն թողնի, իսկ այս դաշույնը ձեզ հաստատ պետք կգա, վերցրեք, միայն թե, շնորհակալ մի եղեք, այդպես բոլորին էլ լավ կլինի . . . ու նաեւ, զգույշ եղեք արեւի տակ մնալուց»:», — նա անհարմար զգալով ժպտաց Քրոուլիին, — Չէ՞ որ այդպես բոլորին լավ կլինի, ճի՞շտ է: Եթե նույնիսկ դա հետո չար արարք անվանեն:

— Ես ինչոր վստահ չեմ, որ դու ընդունակ ես չար արարք անելու, — հեզնեց Քրոուլին:

— Հուսանք, հուսանք, — Ազիռաֆայելը չնկատեց հեզնանքը, — ողջ երեկո տանջվել եմ դրա ձեռքը:

Մի որոշ ժամանակ նրանք նայում էին անձրեւին:

— Գիտե՞ս, ինչն է ծիծաղելի, — հարցրեց Քրոուլին, — կարո՞ղ է խնձորի հետ եղբանը, բարի էր . . . Եթե դուր բարի գործ է արել, դա լուրջ խնդիր է, — հրեց հրեշտակին, — իսկ ի՞նչ, եթե մենք երկուսս էլ սխալվել ենք՝ ես բարի գործ եմ արել, իսկ դու՝ չար: Ա՛, ծիծաղելի է ստացվում բայց:

— Ծիծաղելի չի, — թափահարեց գլուխը Ազիռաֆայելը:

— Հա, երեւի, դու ճիշտ ես, — համաձայնեց Քրոուլին, նայելով անձրեւին ու ուշքի գալով:

Սեւ թուխպերը ամբողջությամբ պատել էին Եղեմի երկինքը: Բլուրների միջեւ ամպրոպն էր որոտում: Միայն վերջերս անուն ստացած կենդանիները զգվոտվում էին անձրեւի տակ: Հեռո՛ւ հեռվում՝ մռայլ անտառի խորքում, ծառերի մեջ, ինչոր բան էր փայլում, ինչոր վառ, կրակոտ մի բան:

Առջեւում էր մութ, անձրեւոտ գիշերը:

## Տասնմեկ տարի առաջ

Տիեզերքի ստեղծման ներկայումս հայտնի տեսությունները պնդում են, որ եթե այն առհասարակ ստեղծվել է, եւ ոչ թե պարզապես ոչ պաշտոնապես սկսվել այնպիսին, ինչպիսին կա, ապա ստեղծվել է 10ից 20 միլիոն տարի առաջ: Նույն այդ

տեսություններն հավաստիացնում են, որ Երկիրը մոտավորապես չորս ու կես միլիոն տարեկան է:

Այս թվագրությունները ճիշտ չեն:

Միջնադարյան հրեա հետազոտողները հայտարարում էին, որ Ստեղծման տարեթիվն է Ք. ա. 3760 թ., հույն օրթոդոկսաստվածաբանները այդ թիվը առաջ տարան մինչև Ք. ա. 5508 թ.:

Եւ այս ենթադրություններն էլ սխալ էին:

Եպիսկոպոս Ջեյմս Աշերը (1508-1656) հրապարակեց Annales Veteris et Novi Testamentis-ը 1654ին, որում նա գրում էր, թե Դրախտը եւ Երկիրը ստեղծվել են Ք. ա. 4004թին: Նրա օգնականներից մեկը այդ հաշվարկներում ավելի հեռուն գնաց, եւ գտավ, որ Երկիրը ստեղծվել է Ք. ա. 4004թ.ի Հոկտեմբերի 21ին՝ կիրակի օրը, առավոտյան ժամը ճիշտ 09:00ին, քանի որ Աստված սիրում էր գործը առավոտյան՝ թարմ ուղեղով ավարտին հասցնել:

Այստեղ նույնպես անճշտություն կա, մի ամբողջ կես ժամի անճշտություն:

Իսկ դինոզավրերի այդ բոլոր քարացած կմախքները, կատակ էր, որը հնէաբանները դեռ չեն ընկալել:

Դա ապացուցում է երկու բան.

Առաջին հերթին, Աստված մտածում է մարդկության համար անհասկանալի ձևով, նույնիսկ, կարելի է ասել, նրա մտքերը պտտվում են շրջաններով: Նա զան չի խաղում տիեզերքի հետ: Նա խաղում է մի անբացատրելի խաղ, հենց իր իսկ հորինած, որը մյուս խաղացողների (այսինքն բոլորի) կողմից կարող է բնութագրվել որպես պոկերի բարդացված տարբերակ, որը խաղում են մութ սենյակում, դատարկ քարտերով, անվերջանալի խաղադրույթերով եւ քարտերը բաժանողով, ով ձեզ երբեք չի ասի խաղի կանոնները, այլ միայն կժպտա ամբողջ ժամանակ:

Երկրորդ հերթին՝ Երկիրը Կշեռք է:

Տադֆիլդյան «Գովազդող»ում՝ «Աստղերը ձեր մասին՝ այսօր»ի սյունակում, այս պատմությունը սկսելու օրը Կշեռքի մասին ասվում է:

«Կշեռք 24 սեպ. 23 հոկ.»

Ձեզ կարող է թվալ, թե դուք անընդհատ նույն հիմար գործն եք անում, տանը եւ աշխատավայրում խնդիրները արդեն վաղուց . . . . .

Խուսափեք անցանկալի ռիսկերից: Կարելու է ընկեր գտնել: Խուսափեք կարելու որոշումներ ընդունելուց, քանի դեռ գալիքը պարզ չի: Այսօր ձեր ստամոքսը զգայուն է, ավելի լավ է խուսափեք աղցաններ ուտելուց: Օգնությունը կարող է հասնել ամենաանսպասելի տեղից:

Ամենը միանգամայն ճիշտ էր, բացառությամբ աղցանների հատվածի:

Այդ գիշերը մութ ու քամոտ չէր:

Այն պետք է լիներ, բայց այդ է եղանակը եւ այն փոխել չի լինի: Յուրաքանչյուր ցնդած գիտականի, ում Մեծ Աշխատանքի ավարտի գիշերը որոտ եւ կայծակ է եղել, կարելի է համապատասխանեցնել դյուժիններ, ովքեր նստել են խաղաղ աստղալից երկնքի տակ ու ժամեր են հաշվել, թե դեռ ինչքան պիտի անիմաստ սպասեն:

Բայց թող ոչ մեկ հանգստության սխալ զգացողություն չունենա (ավելի ուշ անձրեւ կլինի, իսկ ջերմաստիճանը կիջնի ընդհուպ մինչեւ 45 աստիճան ըստ Ֆարենհեյտի): Պետք չի կարծել, թե մթի զորքերը ոտքի չեն, միայն այն պատճառով, որ գիշերը խաղաղ է:

Նրանք միշտ են ոտքի: Նրանք ամենուր են:

Միշտ այդպես է եղել ու կլինի: Իմաստն էլ հենց դա է:

Նրանցից երկուսը հիմա դարան էին մտել ավիրված գերեզմանատանը: Երկու ստվերոտ կերպարանք, մեկը՝ կուզիկ ու փոքր, իսկ մյուսը՝ ուղիղ ու ահարկու, երկուսն էլ օլիմպիական չեմպիոն թաքնվելու մարզաձեւում: Եթե Բոյուս Սփրինգսիներ երբեւէ ձայնագրեր «Թաքնվելու համար ծնվածները», ապա այս երկուսը հաստատ այդ սկավառակի շապիկին կլինեին: Արդեն մի ժամ կլիներ, ինչ նրանք թաքնվում էին մշուշում, բայց նրանք սովոր էին, եւ եթե անհրաժեշտություն լիներ, ողջ գիշեր կթաքնվեին, ու դեռ կունենային բավարար կատաղություն մինչեւ լուսաբաց ընկած վերջին պահերին էլ թաքնվելու համար:

Վերջապես, եւս քսան բոպեից նրանցից մեկը ասաց.

— Կեղտ: Նա դեռ մի քանի ժամ առաջ պիտի այստեղ լիներ:

Խոսողի անունը Հասթուր էր: Նա Դժոխքի Դուքսն էր:

Շատ ֆենոմեններ՝ պատերազմներ, ժանտախտներ, անսպասելի հաշվեքնություններ, եկել են ապացուցելու, որ Մատանի մատը խառն է Մարդու գործերում, բայց երբ Դեւագիտության աշակերտները հավաքվեն, կգան համաձայնության, որ Լոնդոնի Մ25 մայրուղին այդ շարքում, միանշանակ, «Ցուցանմուշ Ա»ն է:

Ու կսխալվեն միայն մի տեղում. կկարծեն, թե այդ գրողի տարած ճանապարհը չարի մոգոնածն է, միայն այն պատճառով, որ ամեն օր այդքան շատ ավտոմեքաներ ու պատահարներ են տեղի ունենում նրա վրա:

Քչերը գիտեն, որ Մ25 մայրուղու ուրվագիծը Հին Մուխի Մեւ հոգեւորականության լեզվում odegraph նշանն է, որ նշանակում է «Փա՛ռք մեծն Գազանին, Աշխարհները լափողին»: Հազարավոր ավտոմեքաներ, որ ամեն օր անցնում են օձաձեւ մայրուղով, տալիս են նույն էֆեկտը, ինչ աղոթքի անվին լցվող ջուրը՝ ստեղծում են ցածրորակ չարի անվերջանալի մշուշ, որը կեղտոտում է մթնոլորտն ու շրջակա միջավայրը մոռոններ հեռավորության վրա անգամ:

Դա Քրոուլիի ամենամեծ հաջողություններից էր: Ստիպված եղավ տարիներ տանջվել, որպեսզի հասնի ուզածին. երեք համակարգչայի հաք, երկու ներխուժում, մի փոքր կաշառք տվեց, ու երբ այդ բոլորը տապալվեց, մի թաց գիշեր անցկացնել երկու ժամ թրջված դաշտում, նշումներ դնելով մի փոքր տարածության վրա, որը սակայն օկուլիստական տեսանյունից կարելու էր:

Երբ Քրոուլին տեսավ, կատարված աշխատանքի առաջին 30 մոդուլը, նա այնպիսի հիանալի զգացողություն ունեցավ, ինչպիսին ունենում են, երբ վատ գործը լավ են արած լինում:

Նրան գովեցին այդ աշխատանքի համար:

Տվյալ պահին Քրոուլին 110մոդուլ ժամ արագությամբ շարվում էր Սլաուից արեւելք: Նրա մեջ ոչ մի հատկապես դիվանական բան չկար, համենայն դեպս, դասական ստանդարտներով: Ոչ պոզ ուներ, ոչ ~~պոզ~~ թեւեր. . . Նա լսում էր «Քուինի լավագույն երգերը» սկավառակը, բայց դրանից հետեւություններ անել պետք չի, որովհետեւ ցանկացած սկավառակ, որը մնացել է ավտոմեքենայի մեջ ավելի երկար, քան երկու շաբաթ վերածվում էր «Քուինի լավագույն երգեր»ի: Ու ոչ մի հատկապես դիվանական բան չէր անցնում նրա մտքով: Իրականում, նա պարզապես փորձում էր հասկանալ, թե ովքեր են Մոն եւ Չենդոնը:

Քրոուլիի մազեր մուգ էին, եւ դեմքի մկանները լավ էին զարգացած, նա հագնում էր օձի կաշվից կոշիկներ, կամ ամենաքախչը նա հագնում էր կոշիկներ, եւ լոզվով իսկապես կարողանում էր գերբնական բաներ անել: Ինքնամոռացության պահերին նա կարող էր նույնիսկ ֆշշացնել:

Նաեւ նա քիչ էր թարթում:

Մեքենան, որ նա քշում էր 1926 թվի «Բենթլի» էր, որը իր արտադրման օրվանից գիտեր միայն մեկ տիրոջ եւ դա Քրոուլին էր:

Քրոուլին ուշանում էր, ու ուշանում էր այն պատճառով, որովհետեւ իրեն դուր էր գալիս քսաներորդ դարը: Այն ավելի լավ էր, քան տասնյոթերորդը, եւ շատ ավելի լավը, քան տասնչորորդը: Ամենալավը ժամանակի մեջ այն է, որ այն քեզ ավելի ու ավելի հեռուն է տանում տասնչորսերորդ դարից՝ միշտ ասում էր Քրոուլին, ամենաարյունոտ ու ձանձրացնող հարյուրամյակից Աստծո, ներողություն ֆրանսերենիս համար, Երկրի: Քսաներորդ դարի մասին ինչ ասես կարելի է ասել, բացի ձանձրալիից:

Հայելում երեւացող կապույտ առկայծող փարոսիկը, վերջին հիսուն վայրկյանների ընթացքում հուշում էր Քրոուլին, որ նրան հետեւում էին երկու մարդ, ովքեր ուզում էին այդ ամենը իր համար ավելի հետաքրքիր դարձնել:

Նա մի պահ նայեց իր ժամացույցին, որը ստեղծված էր այնպիսի հարուստ սկալոդորդի համար, ով ծովի հատակի ռելիեֆը ուսումնասիրելու ժամանակ ցանկանում է իմանալ ժամը ըստ քսան մեկ մայրաքաղաքների ժամանակի: Այն հատուկ ստեղծված էր Քրոուլիի պատվերով: Միայն մեկ օրինակ չի պը անպատկերացնելի թանկ արժի, բայց Քրոուլին կարող էր դա իրեն թույլ տալ:

Այն ցույց էր տալիս ժամը աշխարհի քսան մայրաքաղաքներում, եւ ՄԵԿ ՈՒՐԻՇ վայրի մայրաքաղաքի ժամը, որը միշտ նույն բանն էր ցույց տալիս՝ արդեն շատ Ուշ է:

«Բենթլին» դուրս եկավ ճանապարհից, երկու անիվների վրա անցված ճանապարհի անկյունային հատվածը, ապա սուզվեց տերեւների միջով: Կապույտ լույսը հետեւց նրան:

Քրոուլին հորանջես, հետո բարձրացրեցը ձեռքը դեկի վրայից, մի քիչ շրջվեց ու ինչոր բարդ ձեռքի շարժ արեց ուսի հետեւում:

Կապույտ առկայծող փարոսիկը մնաց հեռվում, որովհետեւ մեքենան կանգնեց, ինչով շատ զարմացրեց իր բնակիչներին: Բայց դա ոչինչ է, համեմատած նրա հետ, թե ինչ նրանք զգացին, երբ բացեցին մեքենայի խցիկը, եւ տեսան, թե ինչի է վերածվել շարժիչը:

Գերեզմանատանը Հասթուրը՝ Դեերից բարձրահասակը, հետ մեկնեց սամակոուտկան Լիգուրին, ով ավելի կարճ էր, ու հետեւաբար նաեւ թաքնվելու ավելի մեծ հակում ուներ:

— Ինչոր լույս եմ տեսնում, — ասաց նա, — էդ կեղտը գալիս է:

— Իսկ այդ ի՞նչ է նա քշում, — հարցրեց Լիգուրը:

— Ավտոմեքենա է, կառք՝ առանց ձիերի, — բացատրեց Հասթուրը, — կարծում եմ, դեռ ավտոմեքենաներ չկային, երբ դու այստեղ էիր վերջին անգամ, համենայն դեպս անձնական օգտագործման համար:

— Այն ժամանակ, դիմացը նստած էր մարդ՝ ձեռքին կարմիր դրոշ, — հիշեցի Լիզուրը:

— Այդ ժամանակներից նրանք մի քիչ առաջ են անցել:

— Իսկ էդ ի՞նչ տիպ է էդ Քրոուլին, — նորից հարցրեց Լիզուրը:

Հասթուրը թքեց.

— Նա այնստեղ շատ երկար է մնացել, — ասաց նա, — հենց Սկզբից: Եթե ինձ հարցնես, կարծեմ, որ տեղացի է դարձել: Մեքենա է քշում, որի մեջ հեռախոս կա:

Լիզուրը խորհեց սրա մասին: Ինչպես բոլոր Դեւերը նա շատ քիչ էր հասկանում տեխնիկայից, եւ նա արդեն ուզում էր ասել «Պիտի որ այդ հեռախոսին լիքը լար է պետք», այդ պահին Բենթլին կանգնեց գերեզմանատան դարպասների մոտ:

— Հետո՞ն էլ արեւային ակնոց է դնում, — Ֆշացրեց Հասթուրը, — նույնիսկ երբ պետք չէն: Փա՛ռք Սատանային, — բաձրացրեց նա ձայնը:

— Փա՛ռք Սատանային, — արձագանքեց Լիզուրը:

— Հէ՛յ, — ասաց Քրոուլին, ձեռքը մի փոքր թափահարելով: — Կներեք, ես ուշացա, բայց դե, գիտեք, թե ինչ վիճակում է Ա40ը Դենհամի կողմերում, հետո ես փորձում էի կտրել Չորլի վուդով, հետո . . .

— Հիմա, վերջապես, մենք բոլորս այստեղ են, — խիստ ասաց Հասթուրը, — մենք պետք է Օրվա Սխրանքների վերահաշվարկ անենք:

— Այո, սխրանքների, — կրկնեց Քրոուլին, չնչին մեղք գործածի տեսքով, ինչպիսին ունենում են, երբ եկեղեցի են գնում երկար ընդհատումից հետո, եւ մոռացած են լինում, թե որ պահին է պետք կանգնել:

Հասթուրը կոկորդը մաքրեց:

— Ես գայթակղել եմ քահանայի, — ասաց նա, — երբ նա արեւոտ եղանակին դուրս եկավ փողոց ու տեսավ սիրունիկ աղջիկներ, ես նրա մտքերի մեջ Կասկած ավելացրի: Նա սուրբ էր դառնալու, բայց տասնամյակ անց, մենք կունենանք նրան:

— Լավն էր, — ասաց Քրոուլին, ուսլուծիվը:



— Ես կոռումպացրել եմ քաղաքական գործչի, — պատմեց Լիգուրը, — ստիպեցի նրան մտածել, որ մի փոքր կաշառքը չի վնասի: Մի տարուց նա մերը կլինի:

Ու նրանք երկուսն էլ, սպասողական նայեցին Քրոուլի կողմը, ով նրանց լայնորեն ժպտաց:

— Ձեզ սա դուր կգա:

Նրա ժպիտը ավելի լայնացավ ու ավելի կոնսպիրատիվ տեսքտ ստացավ:

— Ես փչացրել եմ Լոնդոնի կենտրոնում գտնվող բոլոր բջջային հեռախոսները լանչի քառասունհինգ բոպենների ընթացքում, — ասաց նա:

Լռություն տիրեց: Միայն հեռվում լսվում էր մեքենաների գվվոցը:

— Հա, — ասաց Հասթուրը, — բա հետո՞:

— Դե, լսեք, դա հեշտ չէր, — պաշտպանվեց Քրոուլին:

— Էդ էր ամե՞նը, — հիասթափված ասաց Լիգուրը:

— Լսեք, . . .

— Ու հատկապես ինչո՞վ դա օգնել, մեր տիրոջ համար հոգիների հավաքելու գործին, — ընդհատեց Հասթուրը:

Քրոուլին հավաքվեց:

Ի՞նչ պիտի բացատրեր նրանց: Որ քսան հազար մարդ ահավոր կատաղե՞լ էր: Որ ամբողջ քաղաքում երթեւեկությունը խցանվե՞լ էր: Ու երբ որ նրանք հետ գնացին, այդ ամբողջը թափեցին իրենց քարտուղարուհիների, կամ երթեւեկությունը կարգավորողների, կամ էլի ինչոր մեկի վրա՞, իսկ վերջիններս էլ այլ մարդկանց վրա՞: Վերժխնդրության բոլոր եղանակներով, ու որ ամենալավն է, նույնիսկ այնպիսիներով, որոնք իրենք են հորինել: Եւ այդպես մինչեւ օրվա վերջ: Կողմնակի էֆեկտը հաշվելը ուղղակի անհնար էր: Հազարների ու հազարների հոգու մեջ հայտնվեցին մութ բծեր, եւ ընդամենը պետք է մի փոքր ջանք գործադրել:

Բայց դա Հասթուրին ու Լիգուրին չէս բացատրի: Տասնչորսերորդ դարի մտածողություն ունեն: Տարիներ են ծախսում մի հոգի իրենցով անելու համար: Հա, դա այն ժամանակ վարպետություն էր պահանջում, բայց այս օրերում պետք է այլ կերպ մտածես: Ավելի լայն: Հինգ միլիարդ մարդ կա, մեկ առ մեկ գայթակղել էլ չես կարող, պետք է բաշխես ջանքերդ: Բայց Լիգուրի ու Հասթուրի նման դեւերը դա չեն ընկալի: Օրինակ, նրանք երբեք գլխի չէին ընկնի ստեղծել Ուելսալեզու հեռուստատեսություն:

Կամ ավելացված արժեքի հարկը: Կամ Մանչեստրըրը:

Մանչեստրըրով նա հատկապես հպարտ էր:

— Ձեզ հայտնի Ուժերը, կարծում եմ, բավարարված էին, — ավելացրեց Քրոուլին, — Ժամանակները փոխվում են: Ե՞վ, ինչի՞ համար ենք հավաքվել:

Հասթուրը ինչոր բան բարձրացրեց գերեզմանաքարի հետեւից:

— Սրա պատճառով, — ասաց նա:

Քրոուլին աչքերը չռեց զամբյուղի վրա:

— Օհ, ոչ, — ասաց նա:

— Այո, — հեզնանքով ժպտաց Հասթուրը:

— Արդե՞ն:

— Այո:

— Ու, ըր, ե՞ս պետք է դա անեմ:

— Այո, — Հասթուրը հաճույք էր ստանում դրանից:

— Ինչ՞ հենց ես, — անհուտրեն ասաց Քրոուլին, — դուք գիտեք ինձ: Հասթուր, այդպես չէ՞, այս գործն ինձ համար չէ:

— Օհ, քեզ համար է, քեզ համար, — հաստատեց Հասթուրը, — Սա քո գլխավոր դերն է: Վերցրու: Ժամանակները փոխվում են:

— Այո՛, — Լիգուրն էլ քմծիծաղ տվեց, — նրանք մոտենում են ավարտին, նոր սկզբի համար:

— Ինչի՞ ես . . .

— Դե, դու ակնհայտորեն նրանց սիրելին ես, — քինոտ ասա Հասթուրը, — կարծում եմ, Լիգուրը, այս գործի համար կտար իր աջ ձեռքը:

— Դա ճիշտ է, — ասաց Լիգուրը. «Դե, ամեն դեպքում, ինչոր մեկի աջ ձեռքը, — մտածեց նա, — էնքան աջ ձեռ կա շուրջս, որ իմաստ չկա իմը զոհաբերել»:

Հասթուրը իր կոպիտ հագուստի խորքերից հանեց մատյանն ու մեկնեց Քրոուլին.

— Ստորագրիր . . . այստեղ:

Բառերի արանքում անտանելի երկար լռելով:

Քրոուլին տնտղեց գրպանները ու վերջապես հանեց գրիչը: Այն ու սեփսեփ էր: Ու այնպիսի տեսք ուներ, կարծես կարող էր անցնել գրելու արագության բոլոր ռեկորդները: — Լավ գրիչ է, — նկատեց Լիզուրը:

— Ջրի տակ էլ կարող է գրել, — քթի տակ ասաց Քրոուլին:

— Տեսնես է՞լ ինչ կմտածեն նրանք, — բարձրաձայն մտածեց Լիզուրը:

— Ինչ էլ որ մտածելու լինեն, լավ կանեն արագացնեն, — մեջ ընկավ Հասթուրը, — Չէ, Ա.Ջ. Քրոուլի չէ, քո իրական անունը գրիր:

Քրոուլին մռայլ գլխով արեց, ու մատյանի վրա նկարեց ոլորվող, բարդ նշան: Այն մի վայրկայն պակճառացավ, հետո մարեց:

— Ի՞նչ պետք է անեմ դրա հետ, — հարցրեց Քրոուլին:

— Դու կստանաս հրահանգները, — մռայլվեց Հասթուրը, — ինչի՞ ես էդքան անհանգստանում Քրոուլին: Դարերորդ աշխատել ենք հենց այս պահի համար, որը մոտենում է:

— Հա, ճիշտ է, — պատասխանեց Քրոուլին: Նա հիմա էլ այն ճկուն կերպարանքը չէր, որ այդպես առաձգականորեն դուրս էր ցատկել Բենթլիից: Հիմա նա հակաձյալի տեսք ուներ:

— Մեր հավերժական տրիումֆի պահը մոտենում է:

— Ըհը, հավերժական, — կրկնեց Քրոուլին:

— Ու այդ փառավոր ճակատագրի ձեռքին դու գործիք կլինես:

— Ըհը, գործիք, — մրթմրթաց Քրոուլին: Նա այնպես վերցրեց զամբյուղը, կարծես այն կարող էր պայթել: Ինչը, պատկերավոր ասած, շուտով եւ լինելու էր:

— Դեհ, լավ, — սկսեց Քրոուլին, — դե, ես գնամ, հա՞: Սրա վերջը տամ: Էնպես չի, որ ես ուզում եմ սրա վերջը տալ, — ավելացրեց արագարագ, վախենալով, թե Հասթուրը իր ընկալումը իր դեմ կօգտագործի, — դե գիտեք, ես աշխատասեր եմ:

Ավագ դեղերը չխոսեցին:

— Դե, ես թռա, — արագարագ ասաց Քրոուլին, — կհանդիպենք, . . . դե, հիանալի է, լավ. . . Չառ:

Նեյելով հեռացող Բենթլիին Լիգուրը հարցրեց.

— Էդ ի՞նչ ասաց:

— Իտալերեն էր, — ասաց Հասթուրը, — կարծեմ «սնունդ» է նշանակում:

— Ապա, անկապ է եղպես ասել հեռանալիս, — Լիգուրը նայում էր հեռացող կրակներին, — Դու նրան վստահո՞ւմ ես:

— Չէ, — պատասխանեց Հասթուրը:

— Ճիշտ է, — գլխով արեց Լիգուրը: «Եթե դուները իրար վստահեին, — ինքն իր համար ավելացրեց Լիգուրը, — աշխարհը լիրվ ուրիշը կլիներ հիմա»:

Ինչոր տեղ՝ Էմերշեմից արեւմուտք, գիշերվա միջով սլանում էր Քրոուլին: Չայնապանակներից պատահական մեկը վերցրեց, փորձեց հանել պլաստիկ տուփի միջից, առանց հայացքը ճանապարհից շեղելու: Ավտոմեքենայի թույլ լույսի տակ կարդաց՝ Վիվալդիի «Տարվա եղանակները»: Հանգիստ երաժշտությունը այն էր, ինչ պետք էր իրեն:

Դրեց ձայնապանակը նվագարկիչի մեջ:

— Գրողը տանի գրողը տանի գրողը տանի: Ինչի՞ հենց հիմա: Ինչի՞ հենց ես, — մրթմրթում էր նա, «Քուինի» ծանոթ երաժշտությամբ ողողված:

Ու, հանկարծ, Ֆրեդի Մերկուրին սկսեց խոսել իր հետ.

— ՈՐՈՎՉԷՏԵՎ ԴՈՒ ՎԱՍՏԱԿԵԼ ԵՍ ԴԱ, ՔՐՈՈՒԼԻ:

Քրոուլին մտքում օհնեց: Օգտագործել էլեկտրականությունը, իր հետ կապ պահելու համար, իր միտքն էր, Ներքեւին դա իհարկե դուր եկավ, բայց, ինչպես միշտ, նրանք ամեն ինչ արեցին իրենց ձեռով. . . Նա հույս ուներ համոզել նրանք բաժանորդագրվել «ՄեյլՆեթ»ին, բայց, դրա փոխարեն, նրանք պարզապես խցկվում էին նրա մեջ, ինչ ինքը այդ պահին լսում էր, ու ասում էին այն, ինչ պետք էր:

Քրոուլին թուրը կուլ տվեց:

— Շատ շնորհակալ եմ, տեր, — ասաց նա:

ՄԵՆՔ ՄԵԾ ՀԱՎԱՏ ՈՆՆԵՆՔ ՔՈ ՄԵՁ ՔՐՈՈՒԼԻ

— Շնորհակալ եմ, տեր:

ՍԱ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է, ՔՐՈՈՒԼԻ

— Գիտեմ, գիտեմ . . .

ՍԱ ԱՍԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՆ Է, ՔՐՈՈՒԼԻ

— Ես ամեն ինչ կանեմ, թողեք դա ինձ, տեր:

ՄԵՆՔ ԱՅԴՊԵՍ ԷԼ ԱՐԵԼ ԵՆՔ, ՔՐՈՈՒԼԻ: ԲԱՅՑ ԵԹԵ ԻՆՉՈՐ ԲԱՆ ԱՅՆՊԵՍ ՉԳՆԱ, ԲՈԼՈՐ ՆՐԱՆՔ, ՈՎՔԲԵՐ ԿԱՊ ՈՆՆԵՆ ՍՐԱ ՀԵՏ, :ԿՏԱՌԱՊԵՆ, ՆուՅՆԻՍԿ ԴՈՒ, ՔՐՈՈՒԼԻ, ՈՒ ՀԱՏԿԱՊԵՍ ԴՈՒ, ՔՐՈՈՒԼԻ:

— Հասակացա, տեր:

ԱՀԱ, ՔՈ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ, ՔՐՈՈՒԼԻ:

Ու հանկարծակի, Քրոուլին ամեն ինչ իմացավ: Նա ասում էր դա: Նրանք կարող էին նույն հեշտությամբ ասել իրեն, այլ ոչ թե հանկարծակի լցնել ողջ այդ չոր ինֆորմացիան ուղիղ ուղեղի մեջ:

Նա պետք է գնար ինչոր հիվանդանոց:

— Ես այնտեղ կլինեմ հինգ րոպեից, տեր, խնդիր չկա:

ԼԱՎ: Ես տեսնում եմ փոքրիկ կերպարանքը մարդու scaramouche scaramouche will you do the fandango . . .

Քրոուլին հարվածեց դեկին: Ամեն ինչ այնքան լավ էր գնում, այս դարերի ընթացքում նա այնքան շատ բան էր հասցրել իրենով անել: Հենց էսպես էլ ամեն ինչ տեղի է ունենում: Դու կարծում ես, թե դու աշխարհի գագաթին ես, եւ հանկարծ, նրանք գլխիդ են լցնում Արմազեդոնը՝ մեծագույն պատերազմը, վերջինը ճակատամարտը: Դրախտն ընդդեմ Դժոխքի. երեք ռաունդ, մինչեւ վերջնական հաղթանակ, բողոքարկման ոչ մի հնարավորություն: Եվ վերջ: Ոչ մի աշխարհ էլ չի լինի: Աշխարհի վերջը հենց դա էր նշանակում: Ոչ մի աշխարհ չի լինի: Միայն անվերջանալի Դրախտ, կամ, կախված նրանից, թե ով է հաղթել, անվերջանալի Դժոխք: Քրոուլին չգիտեր, թե դրանցից որն էր ավելի վատ:

Դե հա, Դժոխքը, ըստ սահմանման ավելի վատն է: Բայց Քրոուլին հիշում էր եւ Դրախտը, ու այն որոշ բաներով նման էր Դժոխքին: Օրինակ, ոչ մեկում էլ խմելու նորմալ բան չես ճարի: Ու Դրախտի ձանձրույթը գրեթե նույնքան անտանելի է, ինչքան Դժոխքի գրգիռները:

Բայց այլ ելք չկար: Դու չես կարող դեռ լինել ու ընտրության իրավունք ունենալ:

— . . . Ես քեզ բաց չեմ թողնի (բաց թող նրան) . . .

Դեհ, լավ է գոնե, որ դա այս տարի չի լինի, ու ինքը ժամանակ կունենա գործերը կարգավորելու: Երկարժամկետ պայմանագրերը դադարեցնել, օրինակ:

Ստաճում էր, իսկ ինչ կպատահեր, եթե ինքը պարզապես կանգնեցներ մեքենան այս մութ, խոնավ ու դատար ճանապարհին, վերցնե՞ր զամբյուցը, մի լավ պտտացներ ու դեն նետեր:

Ինչոր ահավոր բան, ահա թե ինչ:

Ժամանակ կար, որ նա հրեշտակ էր: Չէր պատրաստվում Ընկնել, պարզապես շրջապատն էր վատը:

Բենթլին ճեղքում էր մթությունը, չնայած վառելիքի սլաքը կանգնած էր զրոյի վրա: Այն զրոյի վրա էր արդեն վաթսուն տարի: Այնքան էլ վատ չէր դեռ լինելը: Դու չպետք է բենզին գնես: Միակ անգամը, որ Քրոուլին գնել էր բենզին, 1967 թվին էր, որպեսզի դրա հետ միասին խցիկի պատուհանին գնդակի անցքեր ստանա, այն ժամանակ շատ էր ուզում դա:

Հետեւի նստարանին դրած զամբյուղի միջի արարածը սկսեց լացել նորածնի լացով, որ նման էր օդային հարձակման մասն զգուշացնող ազդանշանին: Բարձր: Անբառ: Եվ ծեր:

«Լավ հիվանդանոց է», — մտածեց միտեր Յանգը, — «այն նաեւ լուր կլինե՞ր, եթե միանձնուհիները չլինե՞ին»:

Նարն դուր էին գալիս միանձնուհիները: Այնպես չի, թե նա ձախ գնացող է, կամ նման մի բան: